

446

1. III 3

ALL THE

LE DANUBE

ტყუან, ცუდ-სად-ტყუან.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պարսկաստանի համար տարեկան բաժանորդագինն է
8 ֆր. եւ կամ 3 ռուբլի թղթադրամ. կանխիկ վճարելի:
Ուրիշ ամեն տեղի համար տարեկան բաժանորդագինն է
12 ֆր. եւ կամ 5 ռուբլի թղթադրամ, կանխիկ վճարելի:
Փստաի ծախքը խմբագրութիւնս կը վճարէ:

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ծանուցման տողը 50 սանթիմ է: Հայերեն Պուլկարե-
րեն եւ Ֆռանսերեն լեզուով:

Սմբատաբույժեանս ղրկուած նամակ կամ գրութիւն ետ
չ'արուիր:

Նամակ եւ ծրար պէտքէ զրկել հետեւեալ հասցէով:

M. S. TUTUNDJIEF
ROUSTCHOUK (BULGARIE)

Rédacteur du journal "TANOUF"

“ԴԱՆՈՒԲ,,Ի ՆՊԱՏԱԿԸ

«ԴԱՆՈՒԲ»-ի նպատակը պիտի լինի Պուլկարա-
բնակ և Ռումանաբնակ Հայ ազգայնոց զարգաց-
մանը ծառայել և ծառայել անոնց մէջ այն գաղա-
փարը թէ, մեր արդի կացութեան մէջ, մեզ ան-
հրաժեշտ հարկաւոր է ունենալ մի կեդրոնական
վարչութիւն, ազգային գործոց բարւոք կարգադր-
մանը համար. և մեր այդ ցանկացած վարչութիւ-
նը ընտրուի Սահմանադրական ընտրութեամբ այ-
սինքն անհատական ազատ ձայնիւ: Եւ մեր ապա-
գայ վարչութեան յանձնելու եմք մեր առաւինն
և արտաքին բոլոր վարչական հոգերն. այս ուղղու-
թեան օգտակարութիւն հեազհետէ պարբերաբար
պիտի պարզուին մեր էջերուն մէջ. և քաջայայտ
եմք թէ այդ ուղղութեամբ յայսկոյս և յայնկոյս
Դանուբաբնակ Հոյոցս ներկայն և ապագայն ապա-
հովելէ յետոյ պիտի կարենայ սատար հանդիսանալ
միանգամայն ամբողջ Հայութեան արդի ձգտմանց:
Որով ներկայիւս հետագայ ուշագրաւ կէտերն աչ-
քի հանդէպ ունինք, որոց վրայ մաս առ մաս պի-
տի խօսինք մեր էջերուն մէջ:

Ա.— Պուկարաբնակ և Ռումանաբնակ Հայոթեան կազուծիւնը բարոյապէս և նիւթապէս:

Բ.— Եկեղեցական և հոգևորական գոյութիւնն
ներքն:

Գ.— Ազգային վարժարաններն և դատախարան-
կութեան հարցն:

Դ.— Ազգային կալուածներն և նրանց մատակարարութեանց եղանակներն:

Ե.— Ընտանեկոն կազմակերպութիւններն և սո-
վորութիւններն:

2.— Հայ լեզուի մշակութիւնը:

Է.— Հայ ընկերութիւններն:

Ը.— Հայոց տեղական իշխանութեանց հետ ունեցած յարաբերութիւններն:

Թ:— Հայոց նիւթական և առևտրական կացութիւններն:

Ժ.— Պանդուխտ ազգայնոց վիճակն:

ԺԱ.— Առ Կալօղոյ Պատրիարքարանն և առ Էջմիածնայ կաթողիկոսութիւնն ունեցած համաբուժմներն:

ԺԲ.— Հայութեան ապագայի առթիւ տաժաճ
գաղափարներն:

Սոյն ուշագրաւ հարցերն մինչ այժմ անուշադիր
մնացած լինելուն համար փափաքեցանք զայն մեր
ովսանն մոտամբ իմն լրացնել. այս առթիւ կը խնդ-
րենք միանգամայն մեր արգոյ ընթերցողներէն թէ
իրենք ալ ունին տեղեկութիւններ մեր վերոյ թու-
ած նիւթերու վերաբերեալ, թող բարեհաճին մեզ
ուղարկել ճշգրիտ և անկողմնակալ ոգւով նկա-
րագրելով:

*
**

Դանուբի հրատարակութիւնը թերեւս շատերու կողմանէ աւելորդ նկատուի, ինչպէս այժմեան Եւրոպական և Ամերիկական Հայոցս մէջ մի քանի թերթերն և հանդէսներն նկատուած են, բայց ըստ մեզ. թերթերու և հանդէսներու շատութիւնըն անպէտ չեն. այլ օգտակար, զի քանի հրապարակագրութիւնք շատացան մեր ժողովրդեան մէջ նորանոր փորձառական դասերն աւելցաւ. ճաշակը յղկուեցաւ. դատողութիւնը մարզուեցաւ և կոյր գիւրպոյն հետեւողութենէ ետ դարձաւ:

Եւ մեր թուածներին իբր ապացոյց կարող ենք մէջ բերել այս 5—6 տարուայ ընթացքի մէջ մեր ժողովրդեան տուած քայլերն. երբ հազիւ ունէինք մի քանի թերթեր և ահա այս օր մեր այժմեան թերթերու կամ հանդէսներու շնորհիւ ունեցանք մեր ապագայ շինութեան պատրաստի քիչ թէ շատ կոկուած նիւթերն. և դարձեալ անոնց շնորհիւ կարող ենք նշմարել ամեն Հայի մէջ մի խլրտում դէպ առ ազգն և մի քիչ սէր դէպ առ ընթերցանութիւն, որոնք տարիներ առաջ մեզ Հայոցս համար մեռեալ տառեր կարելի էր համարել:

Մեր ազգն իւր առօրեայ կեանքի ներքին ելեւէջներն կամ սակարանն չ'ունի մեր հանդէպ պարզելու. ապա իւր հրապարակագիրներն են. որ զանոնք հաւաքելով ոմանք խղճմտօրէն և ոմանք ալ անխղճօրէն կը ներկայեն մեզ զայն, և հետեւաբար մեզ միշտ հարկաւոր է ունենալ շատ խղճամիտ հրապարակագրեր և ազգօգուտ հանդէսներ, որք միշտ անկեղծօրէն պատմեն մեզ մեր առօրեայ կեանքի պատմութիւնը իր բոլոր գոյներով, մեր ժողովրդեան առօրեայ կեանքի հետաքրքրական պատմութիւնը այնչափ բազմակողմանի է որ հարկաւոր է իսկ մեզ համար ունենալ յատուկ վարձեալ ազգագրագէտներ (էդնօկուֆ) որ զաղոնք 'ի մի ձուլելով ցոյց տան մեզ. բայց քանի որ դեռ մենք այն նիւթական և բարոյական կատարելութեանցը հասած չենք. որ առանձին կաճառներ ունենանք զաղոնք ուսումնասիրելու ուրեմն մեզ այսինքն անձնիւր անհատի կը մնայ զայն ուսումնասիրել կարի իւր չափ, որովհետեւ բացորոշ կը տեսնուի թէ զիւղէ գիւղ և քաղաքէ քաղաք Հայ ժողովրդեան կեցութիւնը, մտաւոր զարգացումը, և հոգեկան վիճակը կը տարբերի միմեանցմէ, ուստի մեր այս փոփոխակի կենաց դառն ու քաղցր հանդէսներն 'ի հանդէս ածելու համար տակաւին շատ հրապարակագրերու և հանդէսներու կը կա-

րօտինք, այս համոզմամբ «ԴԱՆՈՒԲ»-ի հրատարակութեան սկսանք և քաջայոյս եմք թէ, մեզ հետ շատեր օգտակար պիտի համարեն մեր սոյն հրատարակութիւնը:

ԿԱԹՈՂԻԿՈՍՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Առաջիկայ 92 տարուայ Մայիս ամսում պիտի կատարուի էջմիածնայ նոր կոթողիկոսի ընարութիւնն. այս ընտրութեան առթիւ մենք այժմէն սոյն նկատողութիւններն ունենք. փոյթ չէ թէ շատերի խորթ թուի:

Կաթողիկոսութեան կեղևը արտաքուստ խիստ մեծ տեղ է բռնում յաջս ամեն Հայ դասակարգի անհատականութեան, բացի լէւոնականներէն որք թքում են այդ ոսնած մարմնոյ ներքին և արտաքին մասերի վրայ. քանի որ դրա մեծութիւնը խաբեպատիր քօղի տակ է թաղչուում. ուրով զրօ կարծէ. և միշտ ալ զրօ պիտի մնայ. զի Օհան Կաթողիկոսի օրից աստի երբ Պալատէնիում հաստատուեցաւ (1836), Կաթողիկոսութիւնը ըսկսաւ տարուէ տարի սեղմուիլ քաղաքականապէս և փոքրանալ. այնպէս որ կաղինի կճեպում սեղմուել և այն օրից մինչև այժմ և անկէ յառաջ ալ իսկ երբ պատմութեան էջերն կը պրպտենք տեսնում ենք Կաթողիկոսների միմեանց հանդէպ ունեցած ոտնձգութիւններն, խաների, շահերի և ձարերի միջնորդութեամբ Կաթողիկոսանալու տխուր պատմութեանց սև էջերն. առանց ժողովրդեան շահեկանութիւն ունենալու. թէև երբեմն եղեր են մի քանիներ, անոնք ալ թուով այնքան նուազ են, որ մատի վրայ կարող ենք համարել. զի անոնք ալ միշտ չընտապատուած լինելով հոգւով և մարմնով տխեղծ չըմանում ապրող անհատականութիւններից չեն կարողացել իրենց ծրագիրներն 'ի գործ դնել. ինչպէս ահա՛ վեր առնենք յիշատակութեան արժանի Տ. Ներսէս Աշտարակեցին. այս անձի ձգտումները մեծ էին և իղձերը շատ. բայց իրեն չընտապատողները խիստ աղքատհոգի էականեր լինելով յաջողեցան ձգտումները խաբանել և միանգամայն համոզել որ չ'ձեռնադրէ զՏիար Շաշեանց՝ վեհու մեծ ոգին, որոյ նպատակն էր ոտք դնել էջմիածնայ աթոռին մօտ և թերեւս օր մ'ալ վրան. ու հիմն 'ի վեր բարեփոխէր մեր արդի անկեալ կղերականութեան վիճակն, ինչպէս

նաև վանքերու, եկեղեցիներու կալուածական խնդիրները և դպրոցական հարցերը. այս բարեփոխումները թէ ձարերուն և թէ մեր լիափորիկ կղերականաց գործերին չ'գալուն համար աշխատած են և միշտ ալ աշխատում են կաթողիկոսացնել այնպիսին. որ երբէք ո՛ր է ձգտումներ չ'ունենայ, խորհի միայն վաղարշապատում սիրեկաններ պահել քոյր անունով (թերևս Հրէից Աբրահամ աղբորմէն սորված լինին) կամ վանքում մանկլաւիկներ հոգեորդի (*), այս ընթացքով տնցան գրեթէ քիչ տարբերութեամբ բոլոր կաթողիկոսները և 1836ից աստի Ջարերու յաջորդակի ծրագրած ու սրբագրած Պալատէնիան տրամադրում է Հայոց Էջմիածնայ կաթողիկոսը նկատել սինոդի ատենապետ. այլ ո՛չ վճռարկու նախագահ. նախագահութիւնը ժամանակի Ջարին է վերապահուած, որպիսի վճռէ ո՛ր է խնդիր ըստ հաճոյս և կամ ըստ պատշաճի իւր շահի. որով կաթողիկոսի ենթադրեալ ուժը կոչվում է և դառնում է երկրորդական մի ենթակայ. Արդ մեր նորընտիր կաթողիկոսն ալ այս սեղմեալ ենթակայութեան ասպարէզում պիտի մտնէ. ուրեմն որ՛չափ ուշիմ, բանիմաց, քաղաքագէտ, Ջարերի օրէնքներին և լեզուին ծանօթ և հմուտ մէկը կը հարկաւորի մեզ. որ այս տագնապալից պարագայումս արթնութիւն և արիւթիւն ունենայ ի նպաստ մեզ գործելու. այսինքն ձարական նօթարի ծանրոցը մեր կողմ դնել տալ. ուրեմն ժողովուրդը գտէք և ասացէք ո՞վ կայ մեզ արժանի կաթողիկոսանալու. ես յուսահատ եմ. որովհետեւ արժանաւոր ոչսք չեմ տեսներ. զի մեր կղերականաց ընդ ամենն ալ մեռած և փրտտած տարրեր են. որով աւելի լաւ է լինում այս պարագայիս աշխարհականներից ընտրել քան հոգեւորականներից:

*
**

Մի հայեցակետով եթէ մեր կաթողիկոսութիւնը ի Տաճկահայաստան փոխադրուի աւելի լաւ է լինում քան յԷջմիածին մնալն. զի նախ թէ Պալատէնիական սեղմումներից ազատ կը մնայ, երկրորդայն ջերմ և կոյր վերաբերութիւնը որ ժողովուրդը ունի դէպ այդ անուան, հարկ է ուրեմն այդ վերաբերումից օգտուել աշխատիլ և ահա այդ վերաբերումով ստեղծագործել և կեդրոնացնել մի այնպիսի ուժ որ կարենայ պաշտպան հանդիսանալ

(*) Եթէ հարկ տեսնուի կարող ենք թուականով եւ անունանալէս ալ հաստատել:

այդ երկրի անկետլ ժողովրդեան համար. բայց դժբաղդաբար այս ալ մի մեծ հարց է, որովհետեւ ներկայ տագնապալից պարագայում մասամբ անկարելի է և մասամբ ալ ուշացանք. մենք պարտաւոր էինք այս բանը 1860ի ընտրութեան ժամանակ ի գործ դնել. թէև նոյն թուականներին սոյն տողերը գրողի հայրը «Օրագիր» թերթի էջերում ձայն բարձրացուց և յուզեց. բայց անլսելի մնաց որովհետեւ ազգային գործի գլուխ անցողների շահերը այնպէս պահանջում են որ հանրութեան օգուտը ի նպաստ մի քանի անհատականութեանց զոհուի. եթէ նոյն թուականին մեր կաթողիկոսութիւն ի Տաճկահայաստան փոխադրուած լինէր այժմ մեր կաթողիկոսները կարող կը լինէին մեզ պաշտպանել քրդաց ամեն յարձակումներից. և թերևս կը յաջողէին միանգամայն այդ երկրի ցեղերուն մէջ համերաշխութիւն մ'առաջ բերել և այդ համերաշխութեամբ շատ գործեր տեսնել. իսկ այժմ մասամբ ժամանակն անցել է. և մասամբ ալ անհաւանական է այսու հանգերձ մենք համամիտ ենք փոխադրութեան. զի «լաւ է անուգան քան ո՛չ երբէք»: Ի Տաճկահայաստան փոխադրութեամբ ալ մի նոր մեծ հարց դուրս է գալիս, այսինքն կաթողիկոսացնելու ո՞վ ունինք արժանի. որ կարենայ մեր ցանկացածներն գէթ մասամբ իմն կատարել և ժողովրդեան համակրանքը առ ինքն ձգել կրելով միանգամայն ժամանակի քոթաքական պահանջեալ ոգին. այստեղ ալ գարձեալ մենք յուսահատ ենք զի արժանաւոր և գաւառացի ցեղերու հետ յարաբերութեան մտած ժողովրդակալութիւն վայելած քաղաքագէտ և արթուն ո՛չ ոք ունինք. մեր ժողովրդեան աչքին հանդէպ գիտուն ներկայացուած հոգեւորականները «վարք եկեղեցականաց» մրոտողներն են եղել. դժբաղդաբար անոնք ալ միշտ այլևայլ ապշութեամբ համակուած են եղել. ուստի այս պարագայում «Առ ի չգոյ լաւագոյնի յոռին կալցուք փոխան լաւի» ըսելով ընտրութիւն կատարելու է:

Շատերի հետ մենք ալ մի պահ ենթադրաբար կաթողիկոսութիւնը Պատրիարքութիւն համարենք. մեր Պատրիարքութիւնը ինչ արած է ի նպաստ գաւառացի Հայուն. — խղճահար ձայնով բացարձակ ասում ենք ոչինչ. այո՛, արդարեւ թէև ոչինչ չէ արել. բայց երբ կաթողիկոսական մարմինը իւր ամբողջութեամբ հաստատուի ժողովրդեան բուն սրտին մօտ մեծ տարբերութիւն պիտի ունենայ ծխած Պատրիարքութիւնից. զի ժողովրդեան առ-

օրեայ կացութեան ականատես լինելով իրերու բնական ազդեցութեամբ գործունէութեան եղանակն կը փոխուի ահա ինչպէս օրինակը կը տեսնենք. Աշրգեան Պատրիարքը Արմաշի վանքի բորբոսեալ պատերի տակ չոր հաց ու սոխ ծամելն ու ննջելն կը մոռնայ երբ Պոլիս կուգայ և Գումգաբուի օգն ծանր գտնելով Մաքրի գիւղ իւր հանգստութեան համար բնակարան կընտրէ, ինչ ու, որովհետեւ ճոխ և շքեղ աշխարհի կացութիւնը ու բնոյթը զայդ են պահանջում. այսպէս ահա կեդրոնական Հայաստանում կաթողիկոսութեան հաստատումը մեծ տարբերութիւն պիտի ունենայ. զի առօրեայ տըխուր անցքերի ականատես լինելով իրերու բնական հետեւութեամբ պիտի փոխուի և պիտի փոխել տայ միանգամայն ժողովրդեան կացութիւնը:

(Շարունակել)

ԱՆԻՇԻԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ընթերցողք թող չի զարմանան սոյն վերնագիրն կարգաւորվ և չ'ըսպասեն որ մեր նպատակն է այդ սարսափ ազդող վարդապետութեան մասին նպաստաւոր մի յայտնութիւն ընել, առտառոց մի վարդապետութիւն որ ինքզինքը զարգացեալ կարծող մարդկութեան պաշարներէն ամենէն սոսկալին ըլլալ կը թուի մեզ. մեզ անկ էր բնաւին չի գրել նրա մասին. այլ երբ մարդկութեան բոլոր ողջախոհ մասին նման մեք ևս սոյն վարդապետութեան օրըստօրէ մարդկութեան ամենխաւերուն մէջ վարակելը ցաւելով դիտած ատեննիս չեմք կարող անտարբեր ըլլալ և մեր արտասուքը զսպել մի կարգ անխոհեմ Հայ երիտասարդաց մասին որք նոյնպէս այդ ակտէն բռնուած են. իբր թէ խեղճ Հայ ազգին ցաւերն քիչ են, որոց հազիւ տոկալու կարողութիւն ունի, այս նոր աղէտն ալ պէտք էր աւելնար իւր դժբաղդ ճակատագրային պատմութեան մէջ մի տխուր էջ ևս աւելցնելու:

Մեք յաւակնութիւն չ'ունիմք քննադատելու այդ կորստաբեր վարդապետութեան արտառոց ըսկըբունքներն և անկերպարան ուղղութիւններն զի նախ չ'արժէր, երկրորդ որ նրա հետեւորդք այնքան յամառ են որ բնաւ չեն գիտեր ուղղուիլ կամ գէթ չափաւորուիլ մարդկութեան օգտակար որևէ քարոզութենէ. ամեն բան մոլեգնաբար կը մերժեն օրէնք, կրօնք, իրաւունք, քաղաքական կազմակերպութիւնք, բանակ, Աստուած, և այս ամեն անուրա-

նալի գոյութիւնք ու պիտանաւորութիւնք ոչինչ են նրանց աչքին, մէկ հարուածով տապալել կ'ուզեն զայնս առանց գիտնալու որ ինչ պիտի դնեն նրանց տեղը այս ինքնակոչ բարենորոգիչք որք կը համարձակին դնել թէ իրենց ճգունք անկեալ մարդկութեան օգտին համար են:

Ուշագրութեամբ քննելով իրենց գոյութեան պատմութիւնը կը համոզուիմք որ այդ անկերպարան վարդապետութեան ռահիւրայք գեռ իրենց մէջ չեն հանգած մի որոշ և հաստատ հիման. «Բրուտոն» էն «Բլպըլէ» էն սկսեալ մինչև արդի անիշխանականք իրենց կէտ նպատակի ընտրելով իշխանութեանց ջնջումը, անհամաձայն մնացած են իրենց ծրագրոց և ուղղութեանց մէջ. իրենց վերջի թերթին մէջ կը գուման «նիշանական հոսանք սկսած է ոչնչ կարող չ'ընել» էն էլ որոմեղի անիշխանականութիւն, մի խրոխտաւոր այդչափ մենք կը ճանչնամք որ դու ընկերվարականութեան դէմ մի նորադանդ փողքակալութիւն ես քու վարդապետութեանցդ շէնքի հիմունքը կազմած ես հասարակուրդի, ընկերվարականութեան, ոչնչականութեան, անաստուածութեան, անկրօնութեան, ժիւրայական դաշնակցութեան, էն թէրնասիօնալի, նոյնիսկ քու տապալել ջանացած իշխանութեան տարբերքներէն, դու թերևս մի օր յաղթանակես քեզմէ յառաջ և յետոյ գոյութիւն ըստացող բոլոր այդ զանազան վարդապետութեանց և քու անկայուն պաշտօղ կանգնես նրանց աւերակին վերայ, այլ գիտցիր որ մարդկութիւնը միշտ բնագունակ է մի այլ արտառոց վարդապետութիւն ևս յղանալու և կործանելու քու այդ արինաչէն պաշտօղ, և համոզուէ որ մի օր ուշ թերևս շատ ուշ ամենէն յետոյ պիտի տիրէ մարդոց ողջախոհ մասին իդէալը որուն Աստուած անունը տալու վարժած եմք. մարդիկ բնաւ չի պիտի օգտուին հիմաւէ» քու քարոզութիւններէդ. մարդիկ լոկ իրենց պարտքն և իրաւունքը ճանչնալու և զԱստուած պաշտելու մէջ փնտռեն իրենց երջանկութիւնը:

Անիշխանականաց վերջին յայտարարութեանց մէջ տեսանք որ Հայեր ալ կը գտնուին. այլ վտահ եմք որ այդ փոքրաթիւ Հայերն Փարիզի սալայատակներու վրայ թափառող մի կարգ սովալլուկ իմաստականք են, որք թերևս Ֆրանսական ոստանին ով գիտէ որ «Ֆաքիւլթէ» էն արտաքսուած. ով գիտէ ինչ տեսակ բազգախնդրութիւններէ յետոյ աշխարհէ և կեանքէ զզուած ակտաբարոյ անձնաւորութիւններ են որք ձեր սեղաններէն մի կտոր չոր հաց և մի գաւաթ գինի կորզելու եռանդով դիմած են ձեր բեմին

ձեր քարոզութեանց հաւատացողն ձեանալ. և իբր առհաւատչեայ իրենց գործունէութեան համարձակած են մի ծալք թուղթ վիմագրելով ցրուել Հայ ազգին մէջ իբր բէ+ւ+ժ. գրութիւններ որոյ իմաստին թերեւ հեղինակներն ալ վերահասու չեն. այդ մօլորեալ Հայերն չեն գիտեր թէ ինչ են այսօրուան Հայուն ցաւերն և ինչ են նրա ձգտումներն. եթէ այդ անիշխանական Հայերն փոքր ինչ գիտակ ըլլային Հայութեան արդի պահանջներուն. Հայութեան արդի ցաւերուն այն աստիճանով ի բաց պիտի մերժէին իրենց դաւանած վարդապետութիւններն որք թերեւ օգտակար չէին ըլլալ կամ յարմարիլ ֆրանսայի, իրլանտիոյ, Գերմանիոյ և այլն. այլ ամեն ողջամիտ Հայ ուրախութեամբ կը տեսնէ որ ազգը համազօրեցաւ այսօր որ իր ցաւոյ դարմանը պէտք է փնտռէ իւր ներքին բարենորոգման և զարգացման մէջ.

Անիշխանական խրատումներ, ընկերվարական ուղղութիւններ, յեղափոխական կուսակցութիւններ, ապարդիւն ցոյցեր, արագիւր կակաչման նմանող հրատարակութիւններ, գիւտագիտական դիմումներ, անհիմն և ստայօղ կազմակերպութիւնք ոչինչ նպատաւոր արդիւնք չ'ունեցան. այլ ծառայեցին մի կարգ սակաւաթիւ բաղդախնդրաց ապագան նիւթապէս ապահովելու որք այժմ նստած իրենց հաւանայի սիկառի անուշաբոյր ծուխին մէջէն անխիղճ և անամօթ քմծիծաղով Հայուն ապշութիւնը կը դիտեն, բոլոր ազգային ազատութեան գործիչք Հայուն գերութեան լուծը ծանրացուցին. ազօթիք ևս գիտցող Հայ կնոջ միայն արտասուել բաժին ձգեցին. աշխատասէր Հայ գիւղացւոյն բերանը միայն անէծքի վարժեցուցին և որու գէմ անէծք. Հայ գիւղացին անգիտակ է այդ մասին, այլ արդար անէծքը իր նպատակէն անվրէպ է. Հայ մշակը, արհեստաւորը, գործաւորը, վաճառականը, սեղանաւորը, կղերը, դատարարակը և սակաւապէտ վարժուհին. շղթայի, բանտի, աքսորի, հաւատաքննական չարչարանաց, մահուան և արհաւիրանաց մատնեցին, Հայութիւնը ճանչցաւ մեղաւորն. այդ անխոհմ ձգտմանց բաղդախնդիր հեղինակներն, որք մասամբ իրենց դադանի նպատակին հասած են այսօր, գիտցան պատրաստել իրենց հաստատութիւնը և զայն համակրելի ու ձգողական ընելու համար մեծ հանճարներ իրենց շուրջը հաւաքելու վարպետութիւնն ունեցան. հանճարներ կըսեմ որք դարուս գիտական հրաշալեաց համար կեանք մաշեցուցած անձնաւորութիւններ են. այնպէս որ մարդ կ'ալլի տեսնելով այդ փայլուն ապագայ խոստացող քանքարաւր գլուխներն վերոյիշեալ անխիղճ բաղդախնդիրներու հետեւեցան չի խորհելով որ, այդ գնահատելի անձնաւորութիւնք եթէ գիտնային իրենց բարեմասնութիւններն և տաղանդներն գործածել իրենց շրջանակին մէջ գլուխ

նուղ Հայ տարրին ներքին բարենորոգմանց, այսօր այդ տարրը կարուսեալ այդ տասը տարւոց մէջ մի մեծ յառաջգիմութիւն ըրած պիտի ըլլար յառաջգիմութեան և անդորրութեան ճամբուն մէջ արդի Հայութիւնը ճանչցաւ իր ներկայ տաժանակիր կացութեան հեղինակներն և կը ներէ զինքը խաբող ինքնակոչ ազատարարաց. վասնզի եթէ նոքա զինքը խաբելու անխղճութիւնն ունեցան, ինքն ալ խաբուելու թերութիւնն ունեցաւ զի կրնայ կշռել իր վերայ իշխողի զօրութիւնը, միջոցներն ու հանգամանքներն. մինչդեռ իշխողը Հայուն սոյն տգիտութենէն օգտուիլ գիտցաւ:

Արդ Հայը այսուհետեւ ականջ չի պիտի կախէ իրեն բարեբաստի վիճակ և ապագայ խոստացող որ և է ձայնի և այդ կարգի ձայներէն համարուող անիշխանականաց ձայնն ալ բնաւ արձագանգ չի պիտի գտնէ ողջախոհ և փորձառու Հայոց սրտին մէջ և մեք ևս սոյն համոզմամբ կուգանք մեր Պուլկարաբնակ և Ռումանաբնակ ազգայնոց ուշադրութիւնը հրաւիրել այն ուղղութեան վրայ զոր ներքին բարենորոգմանք անուամբ օժեցինք և յիս վին վստահ եմք որ այդ ուղղութեամբ մի բարեփաստիկ ապագայ ընձեռելու յոյսէն զատ ունենամք պիտի այն պատրաստականութիւնը որով մի օր մեր ամենուն իտէալը եղող սուրբ գործին սատարն պիտի հանգիստնամք. արդ կեղրակացներք մեր խօսքը մատնանիշ ընելով այն բարձր առաւելութիւնը որ երջանկայաւ եմք ապրելով իշխանաց ամենէն իմաստնագոյնին հովանոյն ներքեւ և իր դործերովն ու վճռականութեամբք աշխարհի հիացումը վայելող ժողովրդասէր կորովասիրտ ազատամիտ նախարարապետի մը վարչութեան տակ. որով մեզ միայն կը մնայ օգտուիլ այդ երջանիկ առթէն և պէտք է ճանչնամք մեր պարտքը սու մեր ազգն և առ ազատն Պուլկարիա և Ռումանիա և այս պարտքերէն թերթիս ինկած բաժինը կը խոստանամք հենցհետէ մեր ընթերցողաց հատուցանելու մեր էջերու ծաւալին չափովն:

ԽԱՂԱՂԱՍԷՐՆ

Կ. ՊՈԼԻՍ 9 ՆՈՅ .1891

Մեր ազգային գործերը շատ ցաւալի վիճակի մէջ են, ամեն օր անտեղի մատնութիւններ տեղի կունենան:

Տեղոյս «ՓՈԽՆՁ» լրագիրը մի ամիսէ ՚ի վեր շարունակ իր թերթի մէջ ընդարձակ անտեղի զըրպարտութիւններ հրատարակեց Արաբկիրի առաջնորդ Գեր. Եզնիկ Եպիսկոպոս Ապահունիի դէմ, որպէսզի կառավարութիւնը իր ուշադրութիւնը դարձունէ այդ տնմեղ բարձրաստիճան կրօնաւորի վրայ, «ՓՈԽՆՁ»ի խմբագիրը իր զրպարտիչ նախա-

յօդուածները մէջ իբր եկեղեցական ժողովուրդի միտքը պղտորող մարդ ցոյց կուտայ յայտնապէս գաւառաց մէջ եզնիկ եպիսկոպոսը. ստոր վրայ տեղական կառավարութիւնը անմիջապէս կը հեռադրէ Տիգրանակերտի կուսակալութեան որ եզնիկ եպիսկոպոսը ձերբակալելով Պօլիս խրկուի. կը յուսամ թէ մի քանի օրէն մայրաքաղաքս կը հասնի և կեդրոնական կառավարութենէ լրջօրէն քնննուելով ազատ կարձակուի և միանգամայն կը պատժուի զրպարտիչն ըստ օրինի:

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

Անցեալ հոկտ. ամսոյ 29ին երեքշաբթի գիշեր 'ի ժամ 4ին, Պուքրէշ առ Աստուած փոխեցաւ երբեմն Լուսաւորչական քահանայ Արթ. Տ. Կարապետ Գասպարովիչ հայրըն, 'ի հասակի 68 ամաց եւ յաջորդ օրն ալ յուզարկաւորութեան հանգէսը կատարուեցաւ ըստ Հռովմէական եկեղեցւոյ արարողութեան:

Վախճանեալն ընիկ Կ.Պօլսեցի էր Սամաթիոյ թաղէն. երեսուն տարիներ առաջ ուսուցչութեամբ 'ի Պուքրէշ կուգայ, մի քանի տարիներ վերջ տեղւոյն Հայ քահանայի փեսայ կը դառնայ եւ փեսայութենէն վերջն ալ Հայ եկեղեցւոյ հոգեւոր հայր, բայց տեղացւոց եւ իւր միջեւ անհաշտելի գոտուածիւնների առթիւ ակամայիս կը պարտաւորի ցաւ 'ի սիրտ թողուլ իւր հօտը ու եկեղեցին ու նետուիլ Հռովմէական եկեղեցւոյ բաւիղը. ուր սիրայօժար ընդունուելէ վերջ Պապից ալ առ ինչն սիրոյ եւ համակրանաց խաչ եւ կոնդակ կ'ստանայ. զի հանգուցեալն շատ ընտիր բարեմասնութիւններ ունէր իւր բազմակողմանի հմտութեան եւ լեզուագիտութեան հետ միատեղ:

Երկու աղջիկներ սնէր. իւր Կաթողիկոսութեան միջոցին վերստին շատ ջանքեր ունեցաւ որ Լուսաւորչական Հայ երիտասարդների տայ եւ իւր կեանքը ու գործունէութիւնը միշտ 'ի նպատակ Հայոց էր գոհած, բայց մեր Պուքրէշի Հայութենէ ցրտացեալ ազգայինք կըմբերէին զինքն ու ինքը վերստին անյիշաչար ներող սիրտ մը կը կրէր: Անոնց հանգէս եւ ամեն 'ի Պուքրէշ հանգիպող պանդուխտ կամ այցելու Հայոց ձեռքէն դաւած նպաստները չէր խնայէր. այսօր իւր դամբանի շուրջ զգացեալ կ'արտասուեն ըստ հայկական առածի «Գնա՛, մեռի՛ր արի՛ սիրեմ»:

Մեր կողմանէ ցաւակցութիւն կը յայտնենք մաղթելով հանգիստ իւր վշտաբեկ ոսկերտաց եւ միանգամայն լաւ դաս մեր Պուքրէշի ազգայնոց. որ յետ այսու այսօրինակ զանձեր ջեռքէ չը հանեն եւ իրենց ակունքով օտարին թագը զարդարեն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տփլիսէն կը գրեն հետեւեալը. «անցեալ հոկտեմբեր ամսոյ 25ի ուրբաթ օրը. Թիֆլիսի Կոնստանտինոպոլսի կարգալոյժ արին Օրբէլեանց քահանային որ դատապարտուած է Սիբիր աքաղորդի: Էջմիածնայ սինօդի հրամանի համաձայն Օրբէլեանցը առ միշտ զրկվում է քահանայական կոչումից եւ սոսկական մարդ է դառնում:

Ռուսական եւ Բալտիական թերթեր կ'իմացնեն թէ՛ Հարաւային Ռուսաստանի մի քանի գաւառաց մէջ սովը կը տիրէ. մէկ կողմէն ալ Բէջօ հիւանդութիւնը կը ճարակէ. գիւղացիք անօթութեան եւ թշուառութեան չի կարենալով տոկալ, սկսած են հրոսակ խումբեր կազմել եւ զէն 'ի ձեռին յարձակիլ քաղաքացւոց վրոյ իւրեանց օրապահիկը ճարելու. մինչեւ ցարդ Ռուս կառավարութիւնը երկու անգամ նպաստած է 64 միլիոն Ռուսկի սովացեալ գաւառներին:

Մի քանի հետեւակ եւ հեծեալ զօրաբաժինք զրկուած են սովացեալ գաւառներուն 'ի պահպանութիւն կարգապահութեան տեղական իշխանութեանց օգնելու:

Սրպիոյ հրաժարեալ Միլան թագաւորը երկու միլիոն ֆրանք ստացած է Ռուս կառավարութենէ, այլեւս Սերպիոյ հողի վրայ ոտք չ'կոխելու եւ ոչ ալ քաղաքական գործոց միջամտելու, եւ երկու օրինակ պայմանագրութիւններ ստորագրելով մի օրինակը Ռուս կառավարութեան, իսկ երկրորդը Սրպաց յանձնուած է եւ արդէն այդ պայմանագրութիւնը ստորագրելու համար Սերպ կառավարութենէ ալ երեք միլիոն ֆր. ստացած է:

Վ. ՓԱՓԱՋԵԱՆՑ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՏԱԿ

Ա.

Մերոնի «խաթուն մարէն», երբ երեկոյեան տուն մը տաւ, իսկոյն անկողին մտաւ եւ զգաց, որ մեռնելու է:

Ցաւ չէր զգում, որովհետեւ ո'չ որդի ունէր, ո'չ թուներ եւ ո'չ էլ աղջիկներ. ինքն էր միայն մնացել իւր բազմաթիւ ընտանիքից. մի առ մի թաղել էր իւր որդիներին, յետոյ ամուսնուն, որի վրայ քամել էր իւր արտասուքների յետին կաթիլները. այլեւս չ'էր ուզել արեւի լոյսը տեսնել եւ կուրացել էր: Սակայն բոլորովին էլ կոյր չ'էր, դեռ եւս կարողանում էր ճանապարհի վրայի քարերը եւ առուները տեսնել, յետ կանգնել, երբ երեկոյեան գիւղը մտնող նախիրի եղները ցատկելով անցնում էին, համբուրել տէրհօր աջը, երբ նա մօտենում էր եւ աւելի ձայներից, քան դէմքերից՝ ճանաչում էր իրեն լաւ ճանաչող բոլոր գիւղացիներին: Բոլորը սիրում էին նրան, որովհետեւ «խաթուն մարէն» շատ բարեսիրտ էր, որովհետեւ բոլորին նա օգնում էր. սովի ժամանակ թոյլ էր տալիս իւր դրացիներին օգտուելու իւր ցորենի ամբարից եւ վեց կովի արտադրած կաթից. ինքը միայն իրեն բաւող կերակրով գոհ էր լինում եւ հազար օրհնանքներ էր տալիս իւր դրացի հարսներին, որոնք գալիս լուսնում էին նրա կեղտոտ շորերը, լողացնում էին նրան, խնամում եւ զրա փոխարէն «խաթուն Մարէն»ի դաշտի ցորենը իրենց ամբարը լցնում եւ տիրուհուն մի քանի գաւաթ կաթ տալուց յետոյ, մնացեալը ժողովում եւ իրենց մէջն էին բաժնում:

«Խաթուն Մարէն» այդ շատ լաւ գիտէր, բայց լռում էր եւ երբ իրեն ասում էին սւրիչները՝ պատասխանում էր «մշակն արժանի է վարձոյ իւրայ. .» Խաթուն Մարէն թէեւ հազիւ կարգալ եւ գրել գիտէր, բայց իւր ամուսնու բարձրաձայն աղօթքները բոլորն էլ միան էին մնացել: Միքստանի գիւղացիներից ոչ մէկը չէ մոռացել նրան: Բարեպաշտ եւ կրօնասէր էր. ինչպէս ամեն Հայի կին,

հիւրասէր էր բառի բուն նշանակութեամբ, սիրում էր ամենքին, ուստի եւ ամենքը սիրում էին նրան: Բայց կար մէկը, որը չէր համակրում նրան եւ այդ էլ «խաթուն Մարէ»ի եղբայր Մարգարն էր:

Մարգարը մի մեծ ընտանիքի տէր էր, ունէր արդէն երկու հարսներ եւ չուտով գուցէ ունենար երրորդ թոռը: Թէ ինչու նա չէր սիրում իւր քրոջը — այդ մի պատճառով էր եւ կարճ պատմութիւն:

Երբ «խաթուն Մարէ»ն աղջիկ էր եւ երբ նրա ծնողները կենդանի էին, Մարգարը իւր քրոջ համար գտել էր մի վանեցի ամուսին, բայց ծնողները կամեցել էին իրենց աղջկան չը հեռացնել իրենցից, ուստի եւ համաձայնուել էին սիրուն Մարիամին ինձօյնեց Հայրօին տալ. որին եւ սիրում էր աղջիկը: Հայրօն եւ տիրացու էր եւ նրա ձայնը գրաւել էր Մարիամի սիրտը: Մարգարը հակառակեց եւ երբ իւր քրոջը ամուսնացնում էին, թքեց եւ գոչեց առանց մտածելու:

«Շուն դառնամ, եթէ էլ ձեզ հետ խօսեմ. . .»

Եւ խօսքը պահեց, թէեւ շատ անգամ կամենում էր հաշտուել իւր քրոջ հետ, թէեւ շատ արտասուեց, երբ մի առ մի մեռան իւր քրոջ որդիքը եւ տիրացու Հայրօն — փեսան, բայց կամապաշտ լինելով, կամապաշտ էլ մընաց եւ մի խօսք իսկ չը խօսեց իւր քրոջ հետ:

Մարգարը շատ հարուստ չէր, նրա ունեցած հողերն էլ վախճառուները պարտքի փոխարէն ձեռքիցն առած, նրա կովերը փոխանակ շատանալու՝ նախ բերած ձագերը ողջ չ'մնացին, յետոյ իրենք էլ սատկեցան եւ Մարգարը մնաց մի քանի ոչխարների, մի կովի եւ մի բուն հողի տէր միայն:

Եւ այս բոլոր դժբաղդութիւններին թէեւ ուզեց դէմ դրնել նրա քոյրը, թէեւ «խաթուն Մարէ»ն շատ անգամ ներան ուղարկեց իւր կովերը, ուրիշի բերնով խնդրեց, որ զայ անէ իւր անպէտ մնացած հողերը, սակայն կամապաշտ Մարգարը «չէ ու չէ» էր ասում եւ չէր ընդունում: Վերջ ի վերջոյ «խաթուն Մարէ»ն այլեւս ոչինչ առաջարկեց նրան եւ ահա տաս տարի կար, որ եղբայր եւ քոյր այլեւս ուրիշների միջոցով անգամ իրարու հետ յարաբերութիւն չէին ունենում:

Կարծում էք, թէ չար էր Մարգարը — ոչ, միայն կամապաշտ մէկն էր:

Իսկ «խաթուն Մարէ»ն էլ չէր կամենում եղբորը ամաչեցնել, ուստի եւ նրան օգնելու փոխարէն, միւս խեղճ գիւղացիներին էր անում օգնութիւն:

Գիւղացիք սիրեցին նրան: Մարիամը — Մարէ եղաւ (մայր) եւ կանայք կոչեցին նրան «խաթուն Մարէ» (տիկին մայր):

Առաւօտեան արթնանում աղօթում էր, եկեղեցի գրնում տուն դառնում ճաշում էր, յետոյ մինչեւ երեկոյ մտնում էր աղքատ գիւղացու տները, պահում էր տան տիկիների ծծի մանուկները, որպէսզի չի խանգարեն իրենց մօրը, յետոյ իւր փորձառութեամբ ուսած բժշկութեամբ օգնում էր մի քանի հիւանդների եւ երեկոյեան տուն էր գալիս, ուր իւր «Եկեցէն» եւ «Հայր մեր» ասելուց յետոյ՝ քնում էր, մտածելով որ շուտ իւր ամուսնու մօտ պիտի գնար: Բայց արթնանում էր 70 տարեկան «խաթուն Մարէ»ն, եւ միայն մայիսին 5—ին էր, որ երբ տուն դարձաւ՝ զգաց, որ մահուան ժամը հասել էր: Ժպտեց, չնորհակալ եղաւ Աստուծոյ եւ միտքը դրեց առանց ոչ ոքի իմաց տալու՝ մեռնիլ:

Ուստի եւ ընկաւ անկողնու վրայ ժպտելով մահուան էր սպասում:

(Եւ շարունակուի)

ՀԵՌԱԳՐԱՅԻՆՈՒՐԳ

Սօժիւ 24 Նոյ.

Այսօր Բլէմանթին իշխանուհուն տոնախմբութեան առթիւ մայր եկեղեցեային մէջ հանդիսաւոր պատարագ կատարուեցաւ ի ներկայութեան իշխանի, իր հետեւորդաց, նախարարաց, քաղաքական եւ ղինւորական կարեւոր պաշտօնէից եւ խումն բազմութեան:

Այս գիշեր պարահանդէս տրուեցաւ պալատի մէջ:

Մարտի 23 Նոյ.

Պ. Վիլլավէտէի իր հրաժարականի վրայ պնդելուն համար Պ. Կոսթայոն արդարութեան նախարար անուանուեցաւ նախարարք կէս օրէ յետոյ պաշտօնական երգում պիտի ընեն:

Եւլիւ 24 Նոյ.

Թիւրք պատգամաորութիւնը որ կը բաղկանայ մարեշալ Ժուստ փաշայէ Բեազիմ պէյէ եւ սուլթանի 3 թիկնապահներէ այսօր հասան. իսկոյն Լիվատիա մեկնեցան. այս գիշեր Զարի մօտ պիտի ճաշեն:

ՕԳՏԱԿԱՆ ԽՐԱՏ ՄԷ

ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՏԱՄԱԲԱՆԵԱՅ ՊԱՏՈՒԻՐԱՆՔԸ

Ամերիկեան թերթ մը սա իմաստուն խորհուրդները կուտայ ամէն անոնց, որք լրագրաց կ'աշխատակցին իւր թղթակից կամ այլ ո'ւր է կերպով:

Ա. Ինչ որ ուզես ղրկել լրագրի մը փութով պատրաստ է եւ ղրկէ: Բան մը որ նոր է, երբ ղեռ մտքիդ մէջ է եւ ի գիր չես առած, թերեւս հիննայ, եթէ ժամ մը կորնացնես:

Բ. Կտրուկ ոճով գրէ, ընթերցողին եւ միանգամայն բոլ ժամանակը պիտի չարիս: Սկզբունք ունեցիր քեզ իրեր եւ ոչ՝ բառեր. գէպեր եւ ոչ՝ խորհրդածութիւններ:

Գ. Յստակ չարագրէ՝ եւ մաքուր գրէ՝, խնամք տա՛ր մանաւանդ յատուկ անուանց եւ թուանշաններուն:

Դ. Պարբերութիւններդ համառօտ ըրէ՛, եւ երջանիկ պիտի ընես ընթերցողը: Աւելի վերջակէտներ դիր քանթէ ստորակէտներ, բայց ոչ՝ մին եւ ոչ՝ միւսը մի՛ մոռնար:

Ե. Բառերու եւ թուանշաններու վրայէն սրբագրելով մի՛ գրէր, լաւագոյն է աւել ու նորէն գրել, բառին վրայ կամ հեռուն:

Զ. Էական պայան. թղթին մէկ կողմը միայն գրէ:

Թղթին մէկ կողմը գրուած 100 տող գրութիւն մը, 20 կտորի բաժնուելով 20 գրաչարի կը յանձնուի եւ 7 երկվայրկեանի մէջ կը շարուի:

Իսկ 100 տող գրութիւն մը, թղթին երկու կողմը եթէ գրուի, մէկ գրաչարի միայն կրնայ յանձնուիլ եւ երկու ժամ կը պահանջէ շարուելու համար:

Է. Երես մը գրութիւն որ երկու ժամ կը պահանջէ շարուելու համար, կրնայ շատ անգամ ժամանակին չ'հասնելով, յաջորդ օրուան մնալ:

Ը. Ինչ որ յաջորդ օրուան կը մնայ, կրնայ լինել որ բնաւ չ'տպուի, վասնզի ամէն օր իւր նիւթն ու պաշարն ունի:

Թ. Ինչ որ գրես, ստորագրէ՛: Դիր անունդ եւ հասցէդ. հոգ մի՛ ընէր, լրագիր մը խոստովանահօր կը նմանի, եւ իւր պաշտօնին դէմ մեղանջած կը լինի, եթէ անունդ յայտնէ, առանց քու յօժարութեանդ: Մինչդեռ խմբագրութեան մը համար բոլորովին անօգուտ է առանց հեղինակի գրութիւն մը:

Ժ. ամէն բանէ առաջ միակ սկզբունք մը ունեցիր, ճշմարտութիւն եւ միայն ճշմարտութիւն:

Անձնականութիւնը մէկդի թող. մի՛ ականջ կախեր ոչ՝ թշնամեացդ եւ ոչ՝ սիրելեացդ:

ԸՆՏԵՐ ԱՍԱՅՈՒԱԾԷ

Կենաց երջանկութեան համար չորս բան պէտք է.
Ա. Առողջութիւն. Բ. Մտքի հանդարտութիւն.
Գ. Հարստութիւն. Դ. Հաւատարիմ բարեկամ.
Ա. Բ. և Գ.ը գտնել քիչ մը դժուարին է. իսկ չոր
բորդը բոլորովին դժուարին:

—o—

Կանայք զէնքի կը նմանին. ամենքն ալ վտան-
գաւոր:

—o—

Սէրը այնպիսի բնագոյում մ'է որ միշտ միտքը
դէպի յոյսերու նպատուղ կարծիքները կ'ուղղէ:

—o—

Հարուստին ոճիրը միշտ աղքատին գոգին մէջ
կը ծածկուի:

—o—

Դժբաղդութիւնը այս աշխարհիս մէջ դպրոց մ'է,
ով որ այս դպրոցը գացած չ'է բան մ'ալ չ'է սովորած:

—o—

Դիողինէս ծառէ կախուած կին մը տեսնելով
ըսաւ. «Իցի՛ւ թէ ամեն ծառեր այս տեսակ պտուղ-
ներ ունենային:

ԾԱՆՈՒ ԳԻՐՔԵՐ

—o—

Հետեւեալ գիրքերն կը ծախուին «ԴԱՆՈՒԲ»ի խմբագ-
րատան մէջ. իրենց առջեւ նշանակուած գիներով եւ փոս-
տի ծախքը խմբագրատունէն վճարուելով:

ՐԱՅՅԻ, ԽԵՆՔԸ (Արկածներ վերջին Ռուս-Թուր-
քական պատերազմից) եւ ԶԱՆԸԼԻԳԳԻՆ (Մի պատ-
կեր նրա արշաւանքից). երկուքը մէկտեղ մէկ հատորի
մէջ ամփոփուած. Բ. Տիպ: 8 ֆր. 50 սանթիմ:

ՐԱՅՅԻ, ՂԱՐԱՐԱՂԻ ԱՍՅՂԱԳԻՅԸ Անդր-
կովկասեան պատմական լէպ. 5 ֆր. 50 սանթիմ:

ՐԱՅՅԻ, ԿԱՅԻՆԻ ԿՏԱԿԸ 5 ֆր. 50 սանթիմ:

ՐԱՅՅԻ, ՄԻՆԸ ԱՅՍԳԻՍ, ՄԻԻՍԸ ԱՅՆԳԻՍ
Պատկերազարդ լէպ. Թիֆլիսի վաճառականների կեանքից.
ՐԱՅՅԻ, ԿԱՅԾԵՐԻ ՎԵՐՔԸ 1 ֆր. 50 սանթիմ:

ՐԱՅՅԻՆԻ Պատկերը խոշորագիրը. 2 ֆր.
» » աւելի փոքրը. 1 ֆր.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՎՐԹԱՆԷՍՓԱՓԱԶԵԱՆՑ. ՊԱՏԿԵՐՆԵՐԹՈՒՐ-
ՔԱՀԱՅՍՑ ԿԵԱՆՔԻՑ Որուն մէջ կը պարունակէ տասն-
եւմէկ ազգային վիպասանութիւններ. Գինն է 5 ֆր. 50 ս.

ՎՐԹԱՆԷՍՓԱՓԱԶԵԱՆՑ ՃԳՆԱՌՈՐԵՂՈ (Թուր-
քահայերի կեանքից) Գինն է 1 ֆր. — Փափաքողք կա-
րող են ստանալ «ԴԱՆՈՒԲ»ի խմբագրատունէն:



ԱՐՈՒԵՍ

ԱՏԵՆԱԹՕՈՒԹԵԱՆ

21 ԴԱՍ 16 ՊԱՏԿԵՐՈՔ

ԵՒ

ՅՈՒՆԼՈՒԱԾՈՎ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՕՏԱՐ ՀԱՏԸՆՏՐ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ


ԵՐԷՐԷՐԷՆ

ՏԻԱՐ ՏՔ. Մ. Ս. ԳԱՐԻԷԼ ԵԱՆԻ

Շնորհակալութեամբ ընդունուած է խմբագրութեանս
կողմանէ յիշեալ ազգագուէ երկասիրութիւնն. եւ կը յանձ-
նարարեմք ամեն ուսումնասէր ազգայնոց եւ միանգամայն
պատուելի ուսուցչաց որ դասախօսեն իրենց աշակերտաց,
զի կը պարունակէ շատ կարեւոր եւ պիտանի դիտելիքներ
Հայ լեզուի բառակազմութեան եւ ատենախօսութեան
նկատմամբ:

Գինն է 5 ֆրանք. վարժարանաց համար հարիւրին 50
զեղջ կը լինի:

Փափաքողք կարող են դիմել առ հեղինակն Տօքթ. Մ.
Ս. Գարրիէլեան Նիւ Եօրք Ամերիկա. եւ կամ խմբագրու-
թեանս:




Ա. Զ. Գ.

ԺՈՂՈՎ ԲԳԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

«ԴԱՆՈՒԲ» ԼՐԱԳՐՈՑ

Ի ՐՈՒՍՃՈՒԳ (ՊՈՒԼԿԱՐԻՍ)

Պատիւ ունիմ ծանուցանել արգոյ հասարակութեան
թէ՛ տպարանիս մէջ կը ապագրուին Հայերէն, Պուլ-
կարերէն եւ Ֆռանսերէն լեզուներով ամեն տեսակ
գործեր, ինչպէս են, գրեանք, վաճառականական
տետրակներ, շրջաբերական, առեւտրական ցուցակ-
ներ. այցեւորման. ընկալագրեր, հարսանեաց հրաւի-
րագրեր, մահազոյժի ազգեր եւն եւն. յաճախողք
կը հրաւիրուին դիմել խմբագրութեանս հասցէին:



ՏԷՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ Մ. Ս. ԹԻԻԹԻՆՃԻԷՅԻ

ՏՊԱՐԱՆ Մ. Ս. ԹԻԻԹԻՆՃԻԷՅԻ

РУССЕ. ПЕЧАТНИЦА В. ТАНУПЪ